ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«31» 01 2025թ.
№ ՊԵՆՊ-Գ4Ա-86

«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 00524412
ՀՀ, ք. Երևան, Երկաթուղայինների փ./S/2/4
Հեռ. 098 815665
էլ. հասցեն՝ llaaimport@yandex.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերության միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/7-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը և 3-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.09.2024թ.-ը պետք է մատակարարեր 2000 ք.մ. «Պրոֆնաստիլ Պրոֆնաստիլ գունավոր (կանաչ)», որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից 704 ք.մ. «Պրոֆնաստիլ Պրոֆնաստիլ գունավոր (կանաչ)» ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) և 6.6 կետը՝ (Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով): ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. հունվարի 31-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 53,210 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 11.12.2024թ. և 29,070 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 612,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 323,136 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. փետրվարի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 612,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 323,136 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. փետրվարի 7-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ